№ 5 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 29 ՅՈՒՆՎԱՐԻ 1894 ԹՎԻ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ" ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ֆրանկ կամ տարուանը 6 դրամ: Առանձին մի «ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիրակի համարները 5 ֆրանկ. Արտասահմանում Թուրքիան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի և տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն գնդնւում է ամեն կէս տարեան 5 ֆրանկ կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն ինքնուրոյն: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին համար խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran. Rédaction CHÂVIGH:

1 ֆրանկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Աստուած վիր մոռանաց ձեզի. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր,—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՕԱՑՏԱՅԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ

Տասը, տասն և հինգ տարի կայ, որ ընթերցանութիւնը սկսուել է մեր մէջ, այսինքն՝ աւելի ճիշտն ասած, ընթերցարանների հիմնուելը, որովհետև ընթերցանութիւնը, ընդհանրութեան մէջ, դեռ չ'սկսուած կարելի է համարել։

Թէհրանի մէջ, չը խօսելով Պարսկաստանի միւս քաղաքների մասին, այս րոպէին կայ երկու ընթերցարան, Ընթերցասիրաց ընկերութեան սրահը և Բաֆֆի ընկերութեան՝ երկու սրահները, ուր մեր սովորական հայ ընթերցողին զբաղեցնելու նիւթ չէ պակասում, բայց այդ սրահները աւելի գրադարաններ են, քան թէ ընթերցարաններ, որովհետև ընթերցանութիւն չէ կինում նրանց մէջ։ Երբեմն միայն կարելի է նոցա մէջ տեսնել մի քանի անձնաւորութիւն, որոնք առանց մի ընթերցարանի գոյութեան էլ ընթերցողներ են եղել։

Այսպիսի մի դրութեան մէջ է ընթերցանութեան սէրը մեր մէջ. երբ „Շաւիղը" սկսում է լոյս տեսնել։ Չը պէտք է զարմանալ ուրեմն որ չը նայելով որ մէկ ամիս է անցնում „Շաւիղի" պռաջին թուի երևալուց, դեռ հազիւ քսան հոգի բաժանորդներ ունի մայրաքաղաքիս մէջ, ուր գտնւում է մօտաւորապէս երեք հարիւր հայ ընտանիք, իսկ Պարսկաստանի երկու երեք նշանաւոր հայաբնակ քաղաքների մէջ ոչ մէկ հատ։

Խնդիրը, երբ խօսելու մէջ է կայանում, այն ժամանակ հայերը իրանց եւրոպացիներին համեմատել գիտեն, երբ կրօսակցութիւնները կազմելու համար պատճառներ են հարկաւոր անգլիական ֆրանսիական խորհրդարանի օրինակները ներս կը բերուեն, իսկ ինչ վերաբերում է նոյն անգլիացիների և ֆրանսիացիների յառաջադիմութեան ամենահիմնաւոր միջոցներից մէկին, այն է՝ ընթերցանութեան, դորա մասին հոգ չունի հայ հասարակութիւնը. դորանով նա չէ զբաղւում։ Չէնց դորա համար էլ մեծամասնութիւնը ոչ մի լուրջ ուշադրութիւն չէ դարձնում դէպի ազգային հասարակութիւնները, հենց դորա համար էլ մեր մէջ չը կայ հասարակական մի որոշ գաղափար այսինչ կամ այնինչ խնդրի մասին։ Գաղափար կազմելու համար հարկաւոր է բազմակողմանի տեղեկութիւններ ունենալ, և տեղեկութիւններ ունենալու համար հարկաւոր է ընթերցանութիւն։ Երբ չը կայ ընթերցանութեան սէրը, երբ մարդիկ չեն հետաքրքրւում տեսնելու թէ ինչ ազդութիւն և վերջաւորութիւն են ունեցել նոյնանման ազգային հարցերը ուրիշ քաղաքներում, և թէ արդեօք նոյն խնդրի նոյն լուծումը կարելի է ընդունել մեր դէպքում, ինչպէս կարող է լինել հասարակական առողջ գաղափար։ Եւրոպացիներին հասնելու համար պէտք է հետևենք նոցա քայլերին։ Դեռևս մարդկային գիտութիւնը չէ կարողացել գտնել մի նոր ճանապարհ դէպի լուսաւորութիւն, բացի մամուռից։ Անգլիացի և ֆրանսիացի կառավարները աւելի ընթերցասէր են քան թէ մեր ինտելիգենտ դասակարգը։ Ընթերցողը կը սխալուի եթէ կարծէ որ մենք Թէհրանի հայոց ընթերցասիրութիւնը չափում ենք „Շաւիղի" ընթերցողներով, քաւ լիցի։ Այլ հարցնում ենք թէ ընդհանրապէս Թէհրանի մէջ քանի բաժանորդ կայ հայ պատասխանատու թերթերի։ Ի բաց առնելով „Արմենիան", որ քիչ աւելի տարածուած է, մենք չէինք սխալուել եթէ ասէինք, որ ամեն մի Հայ թերթ հազիւ երկու կամ երեք բաժանորդ ունենայ Թէհրանում, և դորա էլ ընթերցարաններն են։

Մինչև չը մտնի մեր մէջ ընթերցանութեան սէրը մենք չը պէտք է մտածենք մեր ազգային հաստատութիւնները և գործերը աւելի բարւոք դիրքի մէջ գտնել։

Ե. Զ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՄՈՌԱՆԱՑ ՁԵԶԻ *)

Անշուշտ ընթերցողը մեծ զարմանք պէտք է զգայ յօդուածիս վերնագիրն կարդալով, գուցէ և ծիծաղելի պէտք է թուի իրան, սակայն, ամեն պարագայի մէջ՝ սա մէկ նորութիւն է, որը գտել է մի պարոն։ Անշուշտ, նոր գիւտեր անելը, լոկ Եւրոպայի և Ամերիկայի երևելի քիմիագէտներին չէ վերապահուած, այլ Թէհրանի մէկ անկիւնի մէջ խլրտող մէկ հայ բողոքական քարոզիչ էլ կարող է ս. գրքի իրան նեղինչած զօրութեան չափ էլ քիչ կամ շատ նոր գիւտեր անել, այդ նոր գիւտերից մէկն էլ յօդուածիս վերնագիրն է։ Ինչպէս գիտենք, Դատաբնամոին հինգ աւուր աշխատութիւնից յետոյ, վեցերորդ օրը ստեղծեց մարդը ոսկին նորա սերունդն բազմանալով աշխարհիս վերայ և դարեր միմիանց յաջորդելով ճշմարիտ Աստուածապաշտութիւնը կռապաշտութեան փոխուեցաւ և այն նուրը

*) Մենք հրատարակում ենք այս յօդուածը, որ մեզ ուղարկուած է, զանազան հանգամանքներից ստիպուած, հ. մանաւանդ այն նկատումով որ ցոյց տանը մեր կատարեալ անտաղանդութիւնը դէպի այս կամ այն կուսակցութիւնը, թէեւ յօդուածագրի գաղափարները համերաշխ չեն մ ր ուղղութեան հետ, հ. յօդուածը փաստելապէս մի յարձակում է անմնաւորութեան դէմ, քան մի սկզբունքի պաշտպանութեան։

Խմբ.

էակն միանգամայն մոռացուեցաւ, սակայն Տէրն բազումզղջում է, մարդն այդ կռապաշտութիւնից արթնեցնելու համար ուղարկեց ջրհեղեղ։ Այս անելով, դարձեալ չը մոռացաւ մարդին, այլ մի կենդանի սերունդ պահեց ճշմարիտ Աստուածապաշտութեան համար։ Ջրհեղեղից յետոյ մարդկային սերունդը բազմացաւ, այս անգամ էլ կռապաշտութիւնը չը յաջողեց մարդկային սերնդի մէջ մուտք գործելու։ Ամեն պարագայում մարդը մոռացաւ իւր Արարչին, ոչ թէ Արարիչը իւր արարածին, սակայն Տէրն համբերող է, արդար է և ինչպէս տուցի բազումզղջում է, այս անգամ էլ չը մոռացաւ անմիտ մարդուն այլ ուղարկեց իւր միածինը, ով խաչուեցաւ 'ի սէր մարդկութեան։ Քարոզութիւնն տալ չէ նպատակս այլ ուզում եմ ասել որ այսքան դարերում Տէրն չը մոռացաւ մեզի և մինչև յաւիտեան չը թէ՛ մոռացնայ։ Ուրեմն ինչու՞ ելնել և տխմարօրէն ընտանեկան շրջանակների մէջ թմբկահարել „թէ որ Աստուծոյն չաղօթէք և ճշմարիտ հաւատով Քրիստոս—Աստուծոյն չը հաւատաք, Աստուած կը մոռանայ ձեզի“։

Մենք Մեր խօսքն Հղդելով այդ քարոզչին, Քրիստոսի այդ անմեղ գառնուկին, բացէ՛ ի բաց յայտնում ենք, որ Թէհրանի լուսաւորչական հայը Աստուծոյ աղօթելու և Քրիստոսին իբրև Աստուած ճանաչելու համար պէտք չունի բողոքական հոմբակ մի քարոզչի յորդորներին, այդ պարոնն, իբրև Քրիստոսի նոր փաստաբան հովիւ՝ աւելի լաւ կանէր եթէ աշխատեր որ հիւանդութիւնները (խօսքս բարոյական հիւանդութիւնների վերայ է) չը փոխանցեն նոր փարախի նոր ոչխարներին, բայց նա աւելի սիրում է իւր գարշագուժ ձայնն (!) հողմերին տալ և մեզ, լուսաւորչականներս պանջին թռթռեցնել.....։ „Աստուած կը մոռանայ ձեզի...“ Բայց չը գիտեմ թէ ինչու պէտք է մեզ մոռանայ Աստուած։ Եթէ ընթերցողների մէջ մէկը հետաքրքրուի և մեզ հարցնէ թէ ինչու է ուզղուում այդպիսի մի հարց, պատասխանը թողէք ինձ, որովհետև մենք թէհրանաբնակ լուսաւորչականներս մասնակից չենք լինում բողոքական ժողովարան յաճախողներին և անտարբեր ենք մնում դէպի նոցա, այդ պատճառով էլ խոցոտում ենք Աստուծոյ սիրտը և պարտաւորեցնում ենք նորան որ մոռանայ մեզի որպէս թէ Աստուած, լոկ բողոքական ժողովարանին մէջ բնակուած լինէր և ոչ այլուր։ Անշուշտ այսչափ պէտք է լինի պ. քարոզչի ուղղը և դատապարտիւնը։

Չէ՞ որ, բողոքական միսիոնարք աւելի աշխատում են հեթանոսները ճշմարիտ մի կրօնքի բերել. մինչդեռ մեր ժամկոչները լուսաւորչական քրիստոնեային աշխատում են, բողոքական քրիստոնեայ դարձնելու։ Զարմանալի չէ՞ որ բողոքականութիւնը աշխարհիս վերայ տարածելու գլխաւոր միջնորդը հայն է եղել, ուրեմն ըստ նորա կարծեաց նախ հաւատացեալ հայը պէտք է բողոքական դառնայ ապա հեթանոսը. ոչիրիշ քաղաքներում, ժամկոչները մէկ, երկու, կամ երեք հատ են, բայց այստեղ տասնեակներ կան, վերոյիշեալ նախադասութիւնն է իւրեանց փայտէ փոքրիկ մուրճի այնը, որը հրաւիրում է հաւատացեալները ջաղօթքի և եթէ նոյն իսկ բողոքականներից մէկը ներկայ չէ գրտնւում աղօթքի երկրորդ օրը պ. քարոզչի անհամ նախատինքները ուղղւում են դէպի նա իբրև պատիժ նորա անվայել վարուց համար։ Ես քաջ գիտեմ որ պ. քարոզչի ցերեկ և գիշերուայ աղօթքի գլխաւոր նպատակն է հաւատացեալ մի լուսաւորչականի բողոքական դարձնելը և ոչ մէկ հեթանոսի (քանի որ չէ կարող)։

Նպատակս չէ բողոքականներին զբրպարտել, այլ ուզում եմ ասել չափազանցութիւնը ամեն բանի մէջ մէկ փատ յատկութիւն է. այո, սիրելի ընթերցողք, լիրաւի ճշմարիտ է մի քանի անձանց գնանգատն դէպի լուսաւորչականութիւնը և նրանց խիստ բողոքական լինելը, որովհետև նոքա, որոնք այժմ իւրեանց ճշմարիտ քրիստոնեայ են սեպում և իբրև արդարներ ու բարի քրիստոնէի յամեն պարտականութիւն կատարողներ համարում իրանց, տարիներ առաջ, Պարսկաստանի մի քաղաքում պէտք է թողնէին իւրեանց ճշմարիտ կրօնքը և պէտք է հարէին այլակրօնութեան, եթէ չիսիօնարները դրամի օգնութիւն չը հասցնէին նոցանց, միթէ՞ հայ բողոքականաց մեծամասնութիւնը նոյն քաղաքիցն չենք։

Թող ամեն մի ժրդովուրդ և մանաւանդ կրօնաւոր, լաւ մտաբերէ Զակարիոս առաքեալի ասածը „Եթէ ոչ կամիցի կրօնաւոր լինել և ոչ տանջահարիցէ զլեզու իւր. այլ զբաղեցուցանիցէ զանձն իւր, ապնդիսոյն վայրապար է կրօնաւորութիւնն, կրօնաւորութիւնն նպարբ և անարատ է առ 'ի Աստուծոյ և 'ի Հօրէ՝ այս է, այցելու լինել որբոց և այրեաց 'ի նեղութիւն իւրեանց, անարատ պահել զանձն աշխարհէ գլ. Ա. հատուած 26—27“։ Նոյնպէս „Հայպա ամէն ազգի մէջ այն որ նորանից կ'վախենայ ու արդարութիւն կ'կործէ նորան ընդունելի է։ գ. Ա. գլ. ժ. հատուած 35“։

Պարոնն երբ սովորէ ս. գրքի խօսքերն իւր մտքին մէջ լաւ ապաւորելուց յետոյ իւր գործերին մէջ էլ ցոյց տալ, այն ժամանակ պէտք է զիջանենք իրան ընդունել իբրև ճշմարիտ քրիստոնեայ, հակառակ դէպքում պէտք է հաստատանք թէ մեկ խառնուրդ է կեղծաւորութեան, շառլատանութեան ու ստութեանն։ Ապացոյց, իւր յորդորներ՝ որք չեն բղխիր անկեղծ մէկ սրտից, իւր ընկերական վարմունք՝ որ հեռի է մի հաւատ մարդի պատկանելուց և իւր բերնից առատապէս դուրս թափուող ս. խօսքերը՝ որոնք ճշմարտութեան շատ չեն նմանել։

Ծիծաղելի մի կէտ էլ եթէ կայ այնէ, որ պարոնը յանդգնում է իւր այդ կարծեցեալ ճշմարտութեամբ, ուղղափառութեան սերմերը սփռել Թէհրանի ուսեալ երիտասարդաց շրջանակներին մէջ էլ, բայց հաւատացած թող լինի որ Թէհրանի հայ երիտասարդութիւնը արհամարհական մի քմծիծաղով պէտք է վարձատրէ, իւր քրտնաթոր չանքերը և է հարկն պէտք է կարողանայ ժողովրդեան աչքին առջև պարզել բողոքական մի քարոզչի զուտ պատկերը, սրբուած իւր շպարներից։

Հայրդիւ

ՆԱՄԱՅ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէհրան, 24 յունիսի 1894

Հնաւանդ նպիրոյ և երրորդ Քսի մէջ կար մի բնանկատուածին տեղւոյն հայկական ուսումնարանի վիճակ, որը չէ կարող անտեսանել իւր մէջ չը հրաւիրել այդ հանգամանքեան հոգաբարձութեանն ուշադրութիւնը։

Պ. Բարսեղեանը իւր յորդորմի մէջ պահանջել է անկեղծութիւնն եւ անիրաւութեան ոգին, եւ նեղ սիրտի կ'տ'ր վրայ նորա գոյութեան մէջ որ կատարեալ չեն համապատասխանում զուտ իրաւունքեանց հետ, այդ պիտի ցնդարերք այն հանգամանքին որ նա դեռ շատ ժամանակ է ինչ գտնւում է այդ քաղաքում եւ աճիւն տեղեկութիւն չունի տեղւոյն ազգային ինդ'ր'ն'երի եւ կուսակցութիւնների բարդութիւնների մասին։

Նախ եւ առաջ նա մատնացոյց է անում ուսումնարանի ուսուցչների Քսի պակասութիւնը, այդ մի թերութիւն է, որն հոգաբարձութիւնը կատարելապէս հրաժարւում է բայց դարձեալ չտանելիք համար տալ իւր հոգեմ պատճառները։ Պ. Բարսեղեանը կատարելապէս գիտակցում է յանդգնելու՝ ինչ մտածում է որ այդ Քերութեան պատճառաւ է որ մեր դէմ կազմուեր է մի հակակրութիւն, ոչ այն ատեր որ մեր տաւելութիւնն է։ Բարսեղեանի ասելով ելնում մինչեւ բանն է որ հանձնի բանաւում են մեզ մեր հակառակորդները, նորա մեզ մեղադրում են հանելով որ մենք շատ ենք ազգային դրամ հինգ ուսուցչ վարձելով, նորա մտածում են որ մի ուսուցչ բաւական է եօթը դասարան

առաջարկը, այժմ և միշտ էլ պատրաստ ենք կատարելու, միայն թէ մեր թշնամիները չը հեռանան իւրեանց ուսումնարաններից, չը քաշուին այս մէկին հարուածելու համար մէկ ուրիշը հիմնելու, մինչև որ մէկ օր էլ իրանց մնասելու համար մէկ ուրիշ կուսակցութիւն դուրս գալ իւրեանց միջից և մի երրորդը հիմնէ և երեք ուսումնարաններն էլ իրար վերայ կէսի արժէք չունենան։ Այս խնդիրները երկար ժամանակ խօսուել է մեր հասարակութեան մէջ, բայց մի լրագրի բացակայութեան պատճառով ոչ ոք ուղղակի չէ կարողացել լաւ հասկանալ և շատերի շահերն էլ պահանջում էին և չը հասկանալ ձևացնեն. հիմա փառք Աստուծոյ մի լրագիր ունենք որը որքան էլ փոքրիկ լինի մեզ համար բաւական է, և լրագրի էջերն էլ բաց են ամեն մի լուրջ յօդուածի առջև, թող մեր հպարտակ կուսակցութիւնն էլ դուրս գայ և իւր ցաւերը յայտնէ, իւր տրտունջները իւր պատճառները բացատրէ, գուցէ մինչև այժմ մեր մէջ մի սխալ հասկացողութիւն է եղել և այսուհետև լրագրի շնորհիւ ամբողջը պէտք է վերանայ և մի միութիւն կազմուի։

Անդամ հոգաբարձութեան Յ. Զ. Սիրաքանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ռաշտ, 20 յունվարի 1894

Ամսոյս 19-ին Ռաշտի Հայոց գրադարան-ընթերցարանի վարչութիւնը կատարեց իւր ինն երորդ տարեդարձը, որտեղ և կարդացուեց երկամեայ 1892 և 1893 թուի հաշիւը, որից երևեցաւ, որ ընթերցարանը արդիւնք է ունեցել երկու տարուայ ընթացքում 566 զրան, իսկ ծախք 441 զրան 10 կ., որ գրամագլխի հետ միասին անում է 2855 զրան 35 կ.

Նուէրներ տուել են զանազան հեռաւոր ազգայիններից թէ գրքեր, թէ լրագիրներ և թէ դրամական նպաստ, որոնց, վարչութիւնս յայտնում է իւր խորին շնորհակալութիւնը։

Ընթերցարան-գրադարանը ստացել է հետևեալ լրագիրները, „Մշակ“ „Նոր-Դար“ „Արձագանք“ „Տարազ“ „Աղբիւր“ „Մուրճ“ „Արարատ“ „Արմենիա“ „Հնչակ“ „Արանք“ „Нива“ „L'Arménie“ „Arménie“։

Նախագահ՝ Բ. Մարմանեան
Քարտուղար՝ Ե. Գալանեանց

ԸՆԹԵՐՑԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն օր Թէհրանի քահանաների ապորագրութեամբ զանազան հիմնարկութեան թղթեր են երևում ժողովրդեան մէջ, ի նպաստ այս կամ այն ինչ ծրագրի կամ թափառաշրջիկի, թէ դորանց մասին էլ ոչ գրահանդ ունեն իւրեանց հովվասիրից, այդ մենք չը գիտենք. միայն մենք թիմիս Սրբազան Առաջնորդի ուշադրութիւնն ենք հրաւիրում այդ կէտի վերայ։

—

Թէհրանի հայ բժիշկներից մէկը խնդրում է մեզ ազդարարել հայ հասարակութեան, որ ստատիկ ցուրտ ժամանակներում իրանց և ճանաւանդ երեխաներին ազատ պահեն կրակի մերձաւորութիւնից, հաստատելով որ ձեռքերը և ոտքերը սրպած ժամանակ կրակին չատ մօտենալը, հատ անգամ վերքերի պատճառ է դառնում։ Այսինքն եթէ ձմեռը պանահում են շրթունքների, թիւերի, ականջների և ոտքերի ցաւ, բորբոքում կամ նորանց վերայ վերքեր, որ ընդհանրապէս հայ կամ պարսիկ երեխայոց մէջ սովորական է, պէտք է վերագրել նոյն հանգամանքին։

Նեւմերը շուտով քանդուածոյս անդամ տարբերութիւններ տեսք կանեմ այս համարի մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լոնդոնից գրում են։ Չինուորական վարչութեան բոլոր արհեստանոցներում, քանելու ժամերը կրճատուել են և 48 ժամի է հասել շաբաթական, բայց և նպնպես գործաւորների վարձը չի պակասել։ Չինուորական նախարարը արել է այս տեսակ մի կարգադրութիւն այն պատճառով, որ փարձերը հաստատեցին նորան, որ քանելու ժամերի քիչացնելը գործի քանակութեան վերայ շատ քիչ ազդեցութիւն է արել։ Ընդ այսմ, փոխում են և աւելորդ ժամերի գործադրութիւնը, որի պատճառով կարող են ա գործ քանուհիները գործի ընկնել։ Չինուորական նախարարի օրինակին ակամայ ետևից գնալ պէտք է չինի հետևել և ծիլոյին նախարարը, և որովհետև շուտով բազմաթիւ նաւեր պէտք է շինուին, ուստի և գործ կը գտնեն հազարաւոր պարապ նաւագործները։

—Լրագիրները գաղորդում են, որ Գլադստոնի կաբինէտը մտադիր է հետևել զինուորական և ծովային նախարարների օրինակին, այն է քիչացնել բանելու ժամերը բոլոր կառավարութեան հիմնարկութիւնների մէջ։ Բայի այս կառավարութիւնը մտադիր է թագաւորական կապալները տալ այն ֆիրմաներին, որոնք ընդունել են օրուայ ութ ժամեայ աշխատանք։

—„Daily News“ ին հեռագրում են Բուխարեստից, որ Բուլկարիայի զինուորական նախարարը մտադիր է փետրվարի ամսում ճանապարհորդել Բուլգարիայի նոր բերդերին նայելու դիտաւորութեամբ և Բուլգարական զօրքերի հետ ծանոթանալու համար։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լոնդոն, փետ. 1|20 յունվարի։ Բիարիցի պաշտօնական թերթերում Գլադստոնը հերքում է Պալ Մալ լրագրի հաղորդած այն լուրը, որ նորանց կոմունում էր հրաժարուիլ պաշտօնից, ասելով, որ իր տարիքը հեռ դիտարգած տեսակցութիւնը և լսողութիւնը թուլացած է որ քաղաքական գործերից դադարելը անհրաժեշտ դարձել են։ Նորան պաշտոնակալութիւնը ամեն ոյժերի գործադրելու հաստատակամութիւն են կենթարկում։ Մանրամասն Բիարիցի մէջ տրուած նաև մի նոր ընկերութիւն հաստատելու մի շարժում կայ։

Վաշինգտոն, փետ. 1|20 յունվարի։ Սատանդարդ, ասում է, Շանխայի Ռեզիդենտը ասում է, որ Ռուսաստանը և Ֆրանսան մի ծածուկ գաշնագիր են մտել, որով Չինաստանը խոստանում է չէզոք մնալ, եթէ Պամիրի խնդրի նկատմամբ։

Փարիզ, փետ. 1|20 յունվարի։ Նեւսաղորմի մարտին, ասում է Վիենտիանում նորից պատեցին պատգամաւորների ժողովում։ Կառավարութիւնը խոստացաւ ամեն միջոցներ լցնել, աւելացնել մանրամասների թիւը և ամրացնել ծովեզերեայ ամրոցները։ Մեծամասնութեան գաղափարը առաւելութեամբ վարանդիսեան բուէ տուեցաւ։

Գահիրէ, փետ. 2|21 յունվարի։ Խէդիվը բարկացած է նոտարարների վերայ, որ նորա նորան չեն օգնել լորդ Քրոմերի դէմ։ Խորհրդարանի լուծումը հաւանական է կարծուում։

Լոնդոն, փետ. 3|22 յունվարի։ Գահիրէի մէջ այնպէս են մտածում որ նախարարութեան մէջ փոփոխութիւնը դեռ հաւանական չէ։

Լոնդոն, փետ. 4|23 յունվարի։ Աւելի քան 300 ընկերվարականներ մեծ մասամբ գերմանացի բրիտանիներ, երեկ երեկոյեան ժողովեցան Տաւդ-Ցիպի մէջ դէմի Թրաֆալգար հրապարակը երգելու, չը կրմնալով ոստիկանների ճանապարհով երթալ։ Ոստիկանները յարձակուեցան նոցա վերայ և կռիւ սկսուեցաւ. շատերը վիրաւորուեցան ոստիկանների փայտերից։ Բուն ճանապարհորդեցան Թրաֆալգարի հրապարակի վերայ։

«ՇԱՒԻՂԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Գ. Ազգին, Ճշմարտախօս։ Ճշմարտախօս լինելու համար պէտք էնանն յիշուած Ցնտիւ ստորագրուած վենիւ։ Ուստի ձեր յօդուածը չէ կարելի տպել։

Գ. Արշին, Փոռոս։ Ձեր յօդուածը շատ լաւ էր, բայց «Շաւիղը» նվիրատուած լինելու համար չը տպուեցաւ։ Շարունակեցէք գրել։

Արտօնատէր-Հրատարակիչ Անդրէաս Բէկնազարեանց

բանից բաղկացած մի ուսումնարան պանելու համար. նոքա՝ երբոր ուսումնարանը անցաւ ներկայ հոգաբարձութեան ձեռքը, երբոր նոցա պահած խալիֆայութիւն ուսումնարանը վերածուեցաւ փոքրի շատէ շնորհով ուսումնարանի, երբ նոցա պահած մի ունաւոր տեղ Կովկասից կոչուեցան մասնագէտ մանկավարժներ, երբ ուսումնարանի վարչութիւն աշակերտներին էլ միեւնոյն տեղեակի մէջ դաս տալու սիստեմի տեղը բռնեցին կանոնաւոր դասարաններ եւ երբոր ընդունուեցան Կովկասի դասագրքերը. կորեցին բոլոր իրենց յարաբերութիւնները ուսումնարանի հետ. անա թէ ինչու կազմուեցաւ մեր դէմ այդ կուսակցութիւնը. կորցրի է ընթերցողին անհաւատալի թուի, բայց բոլորը, բայց մենք պատրաստենք մեր ասածները ապացուցանելու, եթէ երբեւիցէ մ.կը, մյուս կուսակցութիւններից ձեռնարկէ նոցա հակառակը ներկայացնելու հասարակութեան:

Զբնայած այն դաղափարին, որ կազմուեցաւ մեր դէմ այն օրից, երբ մենք գործի ձեռնարկեցինք, մենք մեր խղճի առջեւ արդարանալու համար պիտի փորձէինք որքան ուսուցիչ էլ որ հարկաւոր լինէր, եթէ, ինչպէս պ. Բարսեղեանը իրաւամբ նկատում է, նիւթականը չը լինէր մեր ձեռքը կապողը:

Պակասը մեզ այսօր հարկաւոր է երկու ուսուցիչ էլ, ուսումնարանին պ. Բարսեղեանի ցանկացած դիրքը տալու եւ այդ երկու ուսուցչին պնակաը մենք պէտք է վճարենք 400 ռուբլի, մի գումար՝ որ մեր համար կատարելապէս անկարելի է վճարել այս հանգամանքների ներքոյ:

Գալով այն հարցին, թէ նախակրթարանի աշակերտները ինչու պիտի մնան ուսումնարանում օրուայ մնացեալ մասը երբ ոչ մի գործ չունեն, այստեղ էլ ստիպւում ենք խոնարհուել յոյսածագրի իրաւացի նկատողութեան առջեւ, բայց եւ այնպէս պէտք է յայտնենք մեր պատճառները որ կարողեն գէթ մասամբ մեզ արդարացնել: Մեր հասարակութիւնը այնպէս է մտածում, որ ուսումնարանը շինուած է ոչ թէ մնայն այն նպատակով որ երեխաները այնտեղ դասերի սակուրին, ուսում առնեն այլեւ ամբողջ օրը այնտեղ մնալով, իրենց ծնողներին զրկեցնեն չդասնան իրենց յարութիւններու!. հայրերը եւ մայրերը կը բարկանան եթէ նոցա երեխային օրուայ կէսը ձոյլ տան երթալ տուն նոցա հանգիստը խանգարելու, նոքա նորան կմանեն եւ իսկոյն կուղարկեն բողոքականների կամ կաթոլիկների մոտ. եւ ասկայն այն ժամերը որ նախակրթարանի աշակերտները առաջին վարժարանի հետ միեւնոյն սենեկում են դասնում, նոցա զբաղուելու ժամերը չեն եւ սենեկում գտնուող ուսուցիչը պարապում է միայն առաջին դասարանի հետ. նախակրթարանի աշակերտներին փոխարէն ձոյլ տալու, որ խաղան եւ իրենց ազմուկով խանգարեն միւսներին, բերում նստեցնում են միեւնոյն սենեկում, ուր ուսուցիչը ներկայ լինելով նոքա հանգիստ են, իսկ ինչպէս ասացի ուսուցիչը նստեցնելով չէ զբաղւում ամենեւին:

Պէտք է յիշել, որ հոգաբարձութիւնը վերջին վեց ամսուայ ընթացքում քանի դիմումներ արել է, մասնաւոր ոգիով մի վերակացու վարձելու եւ այս անյաջողութիւնը կրկնելու, բայց այդ դեռ չէ յաջողուել նորան:

Առաջին դասարանին անցնելով, պ. քննագաւառ նկատում է, թէ ինչ կը նշանակէ նախակրթարանից դուրս գալուց յետոյ աշակերտի հետ սկսել խրեք օտար լեզուներ և բոլոր ուսումնական առարկաները: Առակաների մասին պէտք է ասել, որ ամենավերջին մանկավարժական սիստեմները իրաւունք են տալիս հէնց առաջին տարուանից սկսել բոլոր առարկաները, ի հարկէ նոցա այն ամենատարրական մասը, որ կարող է մարսելի լինել ինը տասը տարեկան երեխայի համար, բայց գալով լեզուներին մենք նոցից պարտաւորւում ենք իրաւունք տալ պ. Բարսեղեանին: Իսկապէս չափազանց շուտ է երեք լեզու սկսել առաջին դասարանի հետ, բայց մայրենի լեզուից՝ բայց և այնպէս ուսումնարանի հոգաբարձութիւնը առանց պատճառի չէ, որ թոյլ է տալիս այդպիսի մի ծանրաբեռնում: Մեր մէջ դեռ ուսման մասին կազմուած չէ մի գաղափար, մարդիկ կարծում են որ իսկ լեզուագիտութիւնն է ուսում, կամ աւելի ճիշտն ասած նոքա մտածում են ուսման շահաւետ կողմի վերայ. եթէ, մտածում է հայրը, իմ որդիս անգլիերէն կամ ֆրանսերէն իմանայ նա կարող է մանել մի ո և է եւրոպական հաստատութեան մէջ և լաւ ոճիկ ստանալ՝ հէնց դորա համար էլ հինգ տարեկան երեխային բերում են ուսումնարան, ասելով, որ ուզում են նա ֆրանսերէն սովորէ, հակառակ դէպքում նորան պէտք է տանէ կաթոլիկների մոտ և եթէ աշխատում են պարոնին հասկացնել, որ դեռ շատ վաղ է երեխայի համար օտար լեզու սովորելը, նա կատարում է իւր խօսքը. դեռ մեր հասարակութիւնը չէ ուզում ըմբռնել որ լեզուագիտութիւնը ուսման բազմաթիւ ճիւղերից մէկն է, և թէ լեզուագիտութիւնը առանց միւս գիտութիւններին ոչինչ չարժէ, նոյն իսկ հէնց ծնողների ցանկացած ծառայութիւնը և ոճիկը ձեռք բերելու համար հարկաւոր է նախ ուսման միւս առարկաները, ապա լեզու. որովհետև ոչ մի եւրոպական հաստատութիւն մի պատուաւոր ծառայութիւն չը պէտք է յանձնէ այնպիսի մարդուն, որ միայն լեզու գիտէ և ուրիշ ոչինչ: Թէ Հրանում գտնւում են այնպիսի խոհարարներ որ շատ վարժ խօսում են ֆրանսերէն, արդեօք երբ և իցէ մի նախանձելի պաշտօն կարող է ունենալ այդ խոհարարը, հարցնում եմ մեր հայրենակիցներին, ոչ, որովհետև նա ուսում չունի, ուրեմն շատ պարզ բան է որ նոյն իսկ երեխայի նիւթական շահերի համար պէտք է կրթել, զարգացնել նորա միտքը ուսման միւս ճիւղերում եթէ չասեմ նախ քան լեզուագիտութիւնը, գնէ նորա հետ միասին: Ահա հասարակաց գաղափարի այս ճնշման առջև է որ ակամայ խոնարհւում է հոգաբարձութիւնը և ուսումնարանի արդէն ոչբազմաթիւ աշակերտներն էլ չը կորցնելու համար, դեռ ստիպւում է երեք լեզուներ մտցնել հէնց առաջին դասարանում, մինչև որ ժամանակը կարգադրէ ամեն քան:

Ինչ վերաբերում է այս կուսակցութեանց միութեան խնդրին, որին հրաւէր է կարդում պ. Բարսեղեանը, չը պէտք է ասել որ եթէ միանալու մի փորձ լինի այժմ, այդ առաջինը չը պէտք է լինի, որովհետև ուրիշ փորձեր էլ եղել են և ամեն դէպքում մեր կուսակցութիւնը պարզ յայտնել է մեր հակառակորդներին, որ ինքը պատրաստ է ամեն գիջում, որ իւր կարողութեան մէջ է անել որպէս զի միութիւնը կայանայ. բայց ամեն անգամ հակառակ կողմից առաջարկուել են այնպիսի պայմաններ որ կամ անիրագործելի են և կամ նոցա իրագործումը վեր է Ուսումնասիրաց ընկերութեան կարողութիւնից: Հակառակ կուսակցութիւնը մեզանից պահանջում է, որ մենք մէկ կողմ դնենք թեմական առաջնորդի վերին հսկողութեան իրաւունքը Ուսումնասիրաց ընկերութեան վերայից, պահանջ՝ որ թէ անիրաւացէ է և թէ կատարելապէս դուրս մեր ոյժերից, նոցա մէկ ուրիշ պահանջն էլ այն է, որ մենք մեր ընկերութեան արդի կանոնագրութիւնը, որ վաւերացուել է եպիսկոպոսի կողմից գէն ձգենք և մի նոր կանոնագրութիւն կազմենք, նմանապէս մի պահանջ՝ որ անիրագործելի է, բայց ասենք թէ այս երկու գիջումներն էլ մենք կարողանանք անել և անենք. ուրեմն որն է մեր հակառակորդների արած գիջումը, այդ ժամանակ միութիւնը յառաջ եկած կը լինէր մեր կատարելապէս տեղի տալովը, ոչ թէ փոխադարձ գիջումներով: Մենք կատարելապէս տեղի տալուց էլ չենք ամաչում եթէ նպատակը միութիւն լինի և եթէ նորա միջոցները բանաւոր և իրագործելի լինեն, մեր ձեռքից եկած գիջումները ինչ որ են մենք քանիցս առաջարկել ենք անել, մենք ասել ենք որ եթէ տրանջողները գոհ չեն ներկայ հոգաբարձութիւնից նա պատրաստ է իւր հրաժարականը տալ. մեր կանոնագրութիւնը 15 հոգուց ստորագրած մի բազքի զօրութեամբ իրաւունք է տալիս մի ընդհանուր ժողով հրաւիրել, մեր հակառակորդները դժբախտաբար 15-ից աւելի են, թող մանեն ընկերութեան մէջ, հրաժարեցնեն ներկայ հոգաբարձութիւնը և իրանց ուզած մարդկանց ընտրեն և գործը նոցա յանձնեն: Այս